

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ**

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆԱՆԱՐ ՎԻԼԵՆԻ

ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

**Ժ.01.02 - «Նորագույն շրջանի հայգրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2018

Ատենախոսության թեման հաստատվել է Արցախի պետական համալսարանում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դավթի Դանիելյան

բանասիրական գիտությունների թեկնածու

Հրաչիկ Հարությունի Սարիբեկյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2018թ. հունիսի 22-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի փող., 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. մայիսի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու՝ Ս. Ա. Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Քսաներորդ դարի երկրորդ կեսի հայ արձակն անհնար է պատկերացնել առանց Հակոբ Կարապենցի գրական հարուստ ժառանգության: Նա պատմվածքի, վեպի, փորձագրության ժանրային սահմաններում վերակառուցել է իմացական խոսքի

սրությունն ու բարձր ընթացքները: Նրա ստեղծագործությունն ամբողջապես փիլիսոփայական հարցումների դիմաց պատասխանների փնտրտուքի փորձ է, ինչպես խոստովանում է ինքը «Բառի փրկությունը» կարճառոտ փորձագրության մեջ 1986-ին. «Գրում եմ, որովհետև կեանքը ո՛չ կատարեալ է, ո՛չ էլ արդար: Գրելով փորձում եմ գտնել ճիշդ հարցումը, երբեմն էլ՝ պատասխանը: Գրելով ջանում եմ փրկել ինձ, ապա՝ մարդուն»¹:

Հ. Կարապենցին կարելի է և պետք է արժևորել հայկական էկզիստենցիալ (գոյապաշտ) գեղարվեստական մտքի շրջանակում, իր ժամանակակիցների՝ Վահե Օշականի, Ռուպեր Հատտեճյանի, Աղասի Այվազյանի, Արման Վարդանյանի և այլոց կողքին: Ավանդույթի բերած կաշկանդումների դիմաց գրողական «փրկության ճանապարհին» գոյապաշտները նախընտրում են «բացարձակ ազատության» կարգախոսը: Համաշխարհային գեոմի վրա՝ «Գոյապաշտութունը խորտակել էր ամբարտակները: ...Յոյսից առաել,- եզրակացնում է Հ. Կարապենցը,- նրանց ենթադաշտը գաղափարներն են՝ արտայայտուած մերթ իրապաշտ, մերթ վերացապաշտ գոյներով, սակայն միշտ մնալով գիտակցականի ու ենթագիտակցականի միջուկ ընկած ծիրում»²:

Գրական հետաքրքրության երկրորդ, սակայն ծննդաբանական գործոնով առաջինի հետ սերտորեն առնչված նրա դաշտն արդիապաշտ ուղղության ակունքն էր, որը սերում էր գոյապաշտության ուղիղ գծից: Նրա հայկական սահմանների գլուխ ամերիկահայ արձակագիրը կարգում էր արևմտահայ Հակոբ Օշականին, որպես գրական բարձրագույն երևույթ, որպես իրական համակշիռ Ջեյմս Ջոյսին³: Իսկ ահա ազգային գրական նորագույն զարգացումներում «ամէնից հաւատացեալ» արդիապաշտների շարքում Հ. Կարապենցը տեսնում էր Վահե Օշականին, Գրիգոր Պըլտյանին ու իրեն:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

¹ **Կարապենց Յ.**, Երկու աշխարհ / գրական փորձագրութիւններ, Ուոթըրթաուն, 1992, էջ 139:

² **Նույն տեղում**, էջ 211:

³ **Նույն տեղում**, էջ 206:

«Արդիապաշտ շարժումն իր բազմաթիւ հակասական, յաճախ անկեղծ, երբեմն մակերեսային, նոյնիսկ իրերամերժ հոսանքներով,- գրում է նա,- ամբողջ գրեթէ երկու դար Արեւմտեան Աշխարհը ողողելուց յետոյ վերջապէս հասել է մեր ափերը: Դեռ ցամաք չի մտել, մնացել է լուսանցքում: Իր մտաւոր ու իմացական հիմքերը դասականութեան ծովում խարսխած լինելով հանդերձ՝ Յակոբ Օշականը հանդիսացաւ հայ նորագոյն գրականութեան արդիապաշտ ուղղութեան ռահվիրան թէ՛ որպէս ձեւ եւ թէ՛ որպէս բովանդակութիւն» (**Նույն տեղում**, էջ 204):

Ծագումով պարսկահայ, բայց ամերիկահայ օջախը նախընտրած Հ. Կարապետյանը իր գրականությամբ ուրվագծել է խոսքի իմացական ընդգրկման նոր սահման: Եթե արևմտահայ սերունդն Սփյուռքի ճանապարհի գեղարվեստական անդրադարձումներում շարունակ վերադառնում էր բնաշխարհի՝ որպես հուզական մեկնակետ, պատկերում պանդխտության դեգերումների «անլուսամուտ» փիլիսոփայությունը Նոր Աշխարհում (Համաստեղ, Բ. Նուրիկյան, Ա. Հայկազ, Վ. Հայկ, Հ. Ասատուրյան և ուրիշներ), ինչն ընդհանրական բնորոշումով հայտնի է իբրև Կարոտի գրականություն, Հ. Կարապետյանը փորձեց մի քայլ առաջ անցնել՝ բազմակողմանի արտացոլելով ոչ միայն հայի, այլև առհասարակ մարդու խորթացումը միջավայրից, անգամ իր իսկ անցյալից: Գրողի ազգային-քաղաքացիական կերպարն ու նրա ստեղծած գրականությունն այսօր էլ շարունակում են պահպանել իրենց արդիականությունը:

Նա ընդգծում էր, որ չի կարելի գոհանալ ազգային սուր մտահոգությունների՝ ավանդական դարձած բարդությամբ (խառն ամուսնություններ, ծննդավայր վերադարձի հորդոր, ամերիկյան բարքերի տևական բնութագրում, ներանձնական ցավերի ու ինքնակենսագրական ավանդական ծավալումների ուրախ-տխուր դրվագներ):

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան Հակոբ Կարապետյանի գրական-գեղարվեստական ժառանգությունն է, նպատակը՝ ատենախոսության առանցքը կազմող պատմվածքների ժողովածուների և վեպերի հետազոտությունը:

Հենց այդ նպատակով պայմանավորված՝ բարձրացրել ենք հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել ու բացահայտել գրողի գեղագիտական համակարգի էական գծերը, հանգուցային հարցերն ու խնդիրները՝ զուգահեռներ տանելով գրողի ու իրեն նախորդած, իրեն ժամանակակից գրական դեմքերի ու հայեցակարգերի միջև:

2. Վերհանել պատմաաշխարհագրական և սոցիալ-քաղաքական օտար միջավայրերի այն գործոնները, որոնցով ըստ էության՝ պայմանավորվում էին նոր միջօրէականներում սփյուռքահայության հոգևոր կեցության տեղաշարժերն ու գոյաբանական խնդիրները:

3. Քննության առնել 20-րդ դարի երկրորդ կեսի անհատի՝ օրեցօր խորացող մենության կարապետյանյան հայեցակարգը:

4. Բացահայտել օտարոտի բարքերից ու մարդկանցից, անգամ սեփական ես-ից աստիճանաբար խորթացող անհատի բարոյահոգեբանական տատանումների ու նահանջի դրդապատճառները:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հ. Կարապենցի երկերի ամբողջական ուսումնասիրության փորձ առայսօր չի արվել, թեև գրականագիտական անմիջական հետաքրքրություն ստեղծագործական տարբեր շրջաններում միշտ առաջացրել է: Գիտական ճանաչողության ծիրում խորը և ուշագրավ դիտարկումներով, հետազոտական տևական որոնումներով, ավանդույթի և նորարարության զուգահեռների քննության գեղարվեստական հարթակ փնտրող հոդվածներով ու տարաբնույթ գնահատումներով հանդես են եկել մի շարք գրականագետներ՝ Մինաս Թյոյոյանը, Հրանտ Թամրազյանը, Սերգեյ Սարինյանը, Դավիթ Գասպարյանը և ուրիշներ:

Գրողի նկատմամբ հետաքրքրությունը մեծանում է որոնումների ետխորհրդային շրջանում: Նոր աշխատություններով, դիտարկումներով և գնահատումներով այսօր էլ շարունակում են հանդես գալ գրականագետներ Անահիտ Քեշիշյանը, Արա Ղազարյանցը, Թորոս Թորանյանը, Մարգար Շարապխանյանը, Վեհանուշ Թեքյանը և ուրիշներ: Թերևս որոշակի ընդգծումով կարելի է առանձնացնել ամերիկահայ Ա. Քեշիշյանի «Հակոբ Կարապենց / աշխարհընկալումը և արվեստը» աշխատասիրությունը, որը լույս է տեսել առանձին գրքով Երևանում: Նկատենք նաև, որ գրողի առանձին ստեղծագործությունների գրական շերտերի խորագնին դատումների կողքին հանդիպում են նաև վերացական, անգամ նկարագրական բնույթի դիտարկումներ (ժ. Միրիճյան, Մ. Հաճյան և ուրիշներ):

Սույն աշխատանքը փորձ է՝ ամբողջացնել և ընդլայնել Հ. Կարապենցի շուրջ ստեղծված գրականագիտական քննության սահմանները, հնարավորինս բազմակողմանի ներկայացնել նրա հերոսների տիպաբանական քննակարգը, բացելու հոգեաշխարհի բազմապիսությունը, գրողի գեղագիտական հայացքն ու գաղափարական սկզբունքները: Աշխատությունը փորձ է նաև յուրովի արժևորելու գրողի գեղարվեստական և գրական փորձագրությունների, դիմանկարների մատուցման ոճային տարաբնույթ կառուցողական եղանակների առանձնահատկությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ուսումնասիրության մեջ փորձ է արվել առաջադրված խնդիրներն ու հարցերը քննել ու մեկնաբանել հայ և համաշխարհային գրականագիտական մտքի շրջանակում: Վերլուծական մոտեցումներում առաջնորդվել ենք պատմահամեմատական մեթոդաբանական փորձառությամբ, առանց որոնց, մեզ թվում է, դժվար է ճշտորոշել գրողի տեղն ու դերն ազգային գեղարվեստական մտածողության զարգացման ընդհանուր խորքում, վերհանել նորագույն ժամանակներում աշխարհի գրական համապատկերին համահունչ, իմացական, այսպես կոչված, «արդիապաշտ» հետաքրքրություններին հայ գրողի՝ ընդառաջ

գնալու սուր նախատրամադրվածությունը, ինչու չէ, նաև գայթակղությունը՝ օտար աշխարհ, օտար շահագրգռություններ, բայց՝ շարժման միասնական զգացողության գիտակցություն: Աշխատանքում փոխնիփոխ քննված են հայ և համաշխարհային գրական փորձի տիպաբանական հայտնի և քիչ հայտնի օրինակներ, ինչն ուսանելի է նոր արդիապաշտ և գոյապաշտ շարժումներին ազգային գեղարվեստական աղերսների դիտարկման, համապատկերի ամբողջական ընկալման տեսակետից, ինչի համար մենք լայնորեն օգտվել ենք մի շարք՝ համադրական, համեմատական մեթոդների զինանոցից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը կարող է ծառայել որպես ուսումնասօժանդակ ձեռնարկ ՀՀ և Արցախի համալսարանների բանասիրական բաժանմունքների դասախոսների և ուսանողների, ընդհանրապես նորագույն շրջանի հայ գրականությամբ հետաքրքրվողների, Սփյուռքի համայնքների համար: Այն կարող է նաև հիմք ծառայել նոր ուսումնասիրությունների համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի հիմնադրույթներն ու եզրահանգումներն արտացոլված են ՀՀ և ԱՀ գիտական հանդեսներում տպագրված հոդվածներում: Ատենախոսությունը քննարկվել է Արցախի պետական համալսարանի Գրականության և լրագրության ամբիոնում ու երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից առաջին գլուխն ունի երեք ենթախորագիր, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 153 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

Ներածության մեջ համառոտ ներկայացված է հարցի պատմությունը, տրված են նյութի գեղագիտական նախադրյալները, արդիապաշտության, էկզիստենցիալիստական ատաղձների սեղմ ճանաչումները, որոնք կազմում են գրողի հարցադրումների և մոտեցումների գիտական նորույթ:

Գլուխ առաջին

Հակոբ Կարապետի կյանքի և ստեղծագործական հանգրվանները

Առաջին գլուխը նվիրված է գրողի կենսապատմի և պատմվածքների առաջնային ժողովածուների հիմնագծերի ուսումնասիրությանը: Քննության են առնվել ազգային և համաշխարհի խաչմերուկներում դեգերող հերոսների

հոգեաշխարհը, նրանց անհատականացման խնդիրներն ու առանձնահատկությունները:

Հ. Կարապենցը (Կարապետյան) ծնվել է Իրանի հյուսիս-արևելքում գտնվող Թավրիզում՝ 1925 թվականի օգոստոսի 9-ին: Թավրիզը՝ մանկության տարիների տպավորությամբ, խառնակ, կեղտոտ քաղաք էր, որն ինքը հեգնախառն, կոչում էր «աշխարհի կենտրոն»:

Իր ծագումնաբանությունը ներկայացնելիս գրողը՝ նախ, հիշատակում է ապուպային՝ շուշեցի Կարապետին, որի որդի Սիմոնը հայտնվել էր Գանձակում, անցել Մեղրի, ուր և ծնվել էր Հակոբ պապը: Վերջինս էլ իր հերթին հայտնվել էր Թավրիզում, ուր այք էին բացել գրողի հայրը՝ Սիմոնը, և վերջապես ինքը: Նկատենք, որ Հ. Կարապենցը նախնիների տոհմագրությունը ներկայացնում է գեղարվեստական հմուտ խաղով:

Ապագա գրողն ապրել է, հիրավի, տխուր մանկություն. երեք տարեկան էր, երբ ծնողներն ամուսնալուծվեցին: Կանխահաս «փողոցային» թափառաշրջկությունը, ինչի մասին պատկերավոր ակնարկում էր ինքը, հետահայաց հիշողություններում պիտի վերաթնանար, դառնար ստեղծագործական կենսական և մնայուն ատաղձ: «Հայրս ինձ մի բան պիտի ասեր» պատմվածքում, տասնյակ տարիներ անց, Հ. Կարապենցը պիտի գրեր. «Հայրս ու մայրս ...այդպես էլ, քաղաքից քաղաք, տնից տուն էին նետում ինձ: Հօրաքոյր-մօրաքոյր, քեռի-մեռի շատ ունէի, բոլորն էլ բարի, գթառատ մարդիկ, սակայն նրանք էլ ունէին իրենց գաւակները, իրենց հոգսերը: Հեշտ չէր յաւելեալ բերան կերակրելը: Ես այդ զգում էի եւ ամաչում»⁴:

Հաճախել է ռուսական մանկապարտեզ, ֆրանսիական գիշերօթիկ դպրոց, իսկ ազգային կրթության հիմքերը հարազատները ձևավորել են ծննդավայրի Հայկազյան-Թամարյան դպրոցում: Պատանության շեմին նրա հասունացման և ազգային նկարագրի խմորման մեջ ուսուցիչների կողքին հոգածու վերաբերմունքով մեծ դեր է խաղացել երկարամյա մանկավարժ Աստղիկ Կարապետյան-Բեգլարյանը, որն իր հորաքոյրն էր: Պատանին կրթությունը շարունակել է Թավրիզի «Մեմորիա» դպրոցում:

1939 թվականից՝ Երկրորդ աշխարհամարտի դժնդակ տարիներից, ցնցվել է նաև հինավուրց Թավրիզը: Բազում հայ ընտանիքների հետ Թեհրան է տեղափոխվել նաև իրենց ընտանիքը. տղան ուսումը շարունակել է տեղի ֆրանսիական Սեն-Լուի ճեմարանում:

Իսկ ահա 1947-ին Հակոբը թողնում է պարսկական միջավայրը և, մի որոշ ժամանակ Ֆրանսիա ու Անգլիա մնալուց հետո, մեկընդմիջտ մեկնում ԱՄՆ, ուր կրթություն է ստանում Կանզասի նշանավոր Միսուրիի, ապա՝ Նյու Յորքի Կոլումբիայի համալսարաններում:

⁴ Կարապենց Յ., Ամերիկեան շուրջպար, Նիւ Եորք, «Ոսկետառ», 1986, էջ 132:

Հ. Կարապենցի ստեղծագործություններում հայկական կյանքը և մարդիկ, որտեղ էլ լինեն, փորձում են գոյատևել համընդհանուր «քառսի» մեջ, ճանաչել պատմությունն ու բնագրը, դիմակայել ժամանակի քմայքներին:

Նշենք, որ Կարապենց գրողը ոչ հաճախադեպ, մի քանի անգամ եղել է Խորհրդային Հայաստանում և դժգոհ էր այդ այցերից, ինչի մասին գրել է խիստ անմիջականորեն: Ընդ որում այդ այցերը մի տեսակ պարտադրված էին թվում. «Երկու առիթներով եղել եմ Հայաստանում, ոչ որպես այցելու, այլ աւելի վատ, որպես ամերիկեան կառավարության ներկայացուցիչ՝ մշակութային փոխանակման ծրագրերի առնչությամբ (այսինքն՝ ամերիկյան այլ խմբագիրների կարգին, 1973-ին – Ն.Ս.): Երկու դեպքում էլ սահմանափակ են եղել շարժումներս թե՛ գործի եւ թե՛ պաշտօնական հանգամանքիս բերումով»⁵:

Նա ապրել ու ստեղծագործել է Կանգասում, Նյու Յորքում, Վաշինգտոնում (այստեղ տասնյակ տարիներ վարել է «Ամերիկայի ծայն» ռադիոկայանի հայկական բաժնի հաղորդումները), Քընեկթիքում և վերջին հինգ տարիներին՝ Բոստոնում: Արձակագիրը մահացել է 1994-ի հոկտեմբերի 19-ին՝ քաղցկեղից: Թաղված է Բոստոնի Քեմբրիջ ավանի Մաունթ Աբլըն գերեզմանատանը, քաղաք, ուր ստեղծագործել էր ընտանիքով մահից ընդամենը մի քանի տարի առաջ:

Ատենախոսության առաջին գլխի երկրորդ ենթավերնագիրը («Հայն ու հայկական ամերիկյան միջավայրում. առաջին ժողովածուի հետքերով») բացում է Ամերիկայում հայերի կույր դեգերումների ճանապարհները:

Բեյրութում 1970-ին լույս տեսած առաջին՝ «Անձանոթ հոգիներ» պատմվածքների ժողովածուն Հ. Կարապենցը որակում է որպես անցած քսան տարիների ընթացքում իր մեջ խմորված գրական փորձառության արդյունք: Սկզբից ևեթ նա «մատնում է» գրական իր նախասիրությունը որպես «փորձնական» ու նաև «փորձնապաշտ» արձակագիր: Մեր գնահատությամբ, «փորձնականը» գրողը դիտում է իբրև սկսնակի հոմանիշ, մինչդեռ «փորձնապաշտը» գրական փորձարկումների հակում է: «Հատունութի՞ն,- հարցնում է նա «Գրողը եւ իր ճամբան» փորձագրությունում ու անկեղծանում,- քա՛ւ լիցի: Պարզապես հասել էր պահը դրսետրելու ներաշխարհիս քարանձաւներում թաքնուած անձանօթներին, որոնք օրն ի բուն ինքնութիւն էին պահանջում»⁶:

Ամերիկյան քաղաքների ժխորային աղմուկի մեջ Հ. Կարապենցն անսում է նախ և առաջ «պզտիկ մարդոց» մենության արձագանքին, ինչպես «Որևէ տեղից մինչև այստեղ» պատմվածքի հերոս Արտաշես Սրմաքեշխանյանը՝ Արտավի պարագան է հուշում: Նա՛ ծնունդով էջմիածնից, ապրել է Երևանում, կնոջ և զավակի հետ աքսորվել Սիբիր, ապա բռնել պանդխտության նոր ճամփան: Մենության

⁵ Նույն տեղում, էջ 125:

⁶ Կարապենց 3., Երկու աշխարհ / գրական փորձագրություններ, էջ 75:

խորհուրդը, թվում է, նրան մերձեցնում է Վ. Սարոյանի «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ» դրամայի հերոսներին:

«Փայտե նժույզը» պատմվածքի երկու հայ հերոսներ, հիրավի, «անձանոթ հոգիներ են»՝ տարբեր աշխարհների ծնունդ: Աղջիկը՝ Սոնան, Հայաստանից է, իսկ Հրանտը՝ ամերիկացի: Նրանց անակնկալիանդիպումից հետո փոխվում է Հրանտի վերաբերմունքը. զարմացել է, որ Խորհրդային Հայաստանում ապրում են նաև «չուսացած», ազգայինի ու մարդկայինի սահմաններում «դեգերող» հրաշալի մարդիկ: Սոնայի ներկայությունը հաստատում է, որ «Երևանը տուն է, օջախ: ...Երևանը մի մեծ ընտանիք է, միանգամայն մարդկային ու բաբախուն»⁷: Մեր տպավորությամբ՝ փայտե, այսինքն՝ «տրոյական» ձին 20-րդ դարում մարդկանց ու քաղաքակրթությունների միջև բացված վիհն է, որը թույլ չի տալիս մերձենալ միայնակ այս հերոսներին:

Հ. Կարապենցի հայ թե օտար հերոսներն ընդվզում են ընկերային կարծրատիպերի դեմ՝ հաստատելով իրենց անհատական նկարագրից ցուլացող գծերի գրավչությունը: Մենության պատճառով ինքն իրենից փախչող, բայց և ինքն իրեն որոնող Արմեն Վահանյանը հայտնվում է մի այլ քաղաքում («Մի այլ քաղաքում»): Ճիշտ է, ինքն իրեն չի գտնում, բայց կարեկցում է իրեն հանդիպած միայնակ, պարզ, անձանոթ Քարոլին:

Հ. Կարապենցը ստամբուլահայ Զահրատի պես վերստեղծում է մեծ քաղաքի ու փոքր մարդկանց հակադրական ելագծերը, մի էական տարբերությամբ. Զահրատի մոտ նրանք ժողովրդական խենթերն են՝ կիկոներ, խարալամպուսներ, «թաղին» բնակիչներ: Հ. Կարապենցի ոճավորման մեջ առանձնանում են իրենց ողբերգական ներքինը խորապես վերապրող տառապյալները, որոնք չեն հաշտվում՝ երազը շարունակելով խառնել «արթմնի» կյանքին:

Սակայն երկու դեպքում էլ աշխարհագրական ծավալները թաղից նրանք հասցնում են սփյուռքահայության դիմագծերի խտացումին:

Հ. Կարապենցի պատմվածքներից մեկում համակողմանիորեն բացվում է փոքր, խեղճության բարդույթը շրջանցել փորձող, բայց իր ներքին ազատության քայլին ընդառաջ գնացող Կյուրեղ Աթանոսյանի հոգեկան դրաման՝ նոր տեսանկյունից («Կարմիր շրջագգեստով կինը»):

«Վերջին կայարանը» պատմվածքում գրողն ազգային երազանքի հաճախանքն ապրեցնում է Վաչիկի շնորհիվ, որի պատանեկան թրթիռներում Երևանն արյան հեռակա թվացող վազք է: Ժամանակին ծնողների կարոտախառն պատմությունները հայրենիքի, Արարատ-Մասիսի ու Արաքսի մասին այնքան էին բորբոքել տասնամյա մանուկի երևակայությունը, որ նա համոզում է սևամորթ ընկերոջը, որի անունը երազի հանդուգն ու հեգնական խաղով՝ Ջորջ Վաշինգտոն

⁷ Կարապենց 3., Անձանոթ հոգիներ, Պէյրուֆ, 1970, էջ 19-20:

էր, ձեռք գցել «մինչև վերջին կայարան» նշումով երկու տոմսակ, անցնել կամուրջներ ու ծովեր, հասնել հեքիաթի Երևան: Բայց գնացքը պատանիներին հասցնում է ընդամենը տեղական նշանակության «վերջին կայարան», ո՛չ ավելին: Երազն ավարտվում է ամերիկյան տիրական ռեալությանմբ, առանց ցնցումի: Նրանք հասել են Ջեֆերսոն, ըստ Հ. Կարապենցի՝ «հայ» Ամերիկայի մտացածին գրական միջնաբերդ, այստեղից զանգել են պատանու մորը, որ գա զավակի ետևից. արկածն ավարտված է, հույսերի «վերջին կայարանը»՝ հաղթահարված: Երևանն այդպես էլ չի «նվաճվում»:

Ինչ վերաբերում է ամերիկյան այս գողտրիկ նյութին, ընդգծենք, որ այն հաճելիորեն հիշեցնում է Վ. Սարոյանի՝ անհամեմատ վաղ գրված «Գեղեցիկ, սպիտակ ձիու ամառը» պատմվածքը՝ «Իմ անունը Արամ է» ժողովածուից, ուր պատանեկան խանդավառության նույն ազգային խորքն է: Արթնության ոգին է ընդհանուր ելակետ երկու այս գործերում. Վ. Սարոյանի պատանիներին հաջողվում է գրաստ դարձած ձիու առավուտներին տենչ հաղորդել, այն, ինչ ենթագիտակցորեն իրենց ռունգերում է, իրենց հայկականության խորքերում: Ենթագիտակցական է նաև Հ. Կարապենցի պատանու հայկականության հաստատման քայլը. նրան առաջնորդում են նախորդ սերնդից ժառանգած կոչնակները:

Գրականագետ Դ. Գասպարյանը, բարձր գնահատելով արձակագրի «Վերջին կայարանը» պատմվածքը, իրավացիորեն առաջարկում է այն զետեղել Հայաստանի հանրակրթական հիմնական դպրոցի գրականության դասագրքերում՝ «...դրանով իսկ Հակոբ Կարապենցի համար էջ բացելով գրականության ուսուցման մեր ծրագրերի մեջ»⁸:

Ատենախոսության առաջին գլխի երրորդ ենթախորագիրը («Հին ու նոր աշխարհը՝ ազգայինի և համաշխարհի խաչմերուկներում (պատմվածքների ժողովածուների հիմնագծերը)» շարունակում է գրողի ամերիկյան դեպերումների մեջ հայության ազգային ոգու պաշտպանության գեղարվեստական որոնումը:

«Նոր աշխարհի հին սերմնացանները» պատմվածքների երկրորդ ժողովածուն ուներ լուսավոր ու թախճոտ երանգ՝ հայոց տոհմիկ սերմնացանները դեռ արարման լիցքեր են պահել Նոր աշխարհում՝ Հին աշխարհից փայփայած: Միջավայրի խնդիրն այստեղ, հիրավի, դառնում է կառուցողական գործոն: Նա խոստովանում է, թե պավլինում է ընթերցողի երևակայությանը, որ կարողանա «...այսպես ասած, տեղականացնել դրուագները...: Չէ՞ որ տարագրությունը նույնն է ամէն տեղ, ամէն երկրում: Չէ՞ որ ամէն տարագրի սրտում տակափն մխում է հայրենի տան կարօտը»⁹:

⁸ Գասպարյան Դ., Հայ գրականություն, գիրք երկրորդ, «Ձանգակ-97», Եր., 2002, էջ 259:

⁹ Կարապենց Զ., Նոր աշխարհի հին սերմնացանները, Վաշինգտոն, 1975, էջ 5:

Պատմվածաշարի առթիվ Փարիզի «Յառաջ» օրաթերթի մեկնաբան Ժ. Միրիճյանը որսում է «սերմնացանների» երկփեղկ վիճակները. «Ասոնք՝ ներքին կապով ագուցուած, անելի խճանկարներ կը թուին ըլլալ...: Բոլորովին այլամերժ քառուղիներու եզրին կեցած հին սերմնացաններ են, որոնքընդհանրապէս յաջողած են իրենց ժուժկալ աշխատանքով տեղ եւ դիրք գրավել Նոր Աշխարհին մէջ»¹⁰:

Հ. Կարապետնի արձակն աչքի է ընկնում ընդհանրացման ուժով, հոգեբանական ներթափանցումներով, անկաշկանդ անկեղծությամբ: Հեղինակը թախիժով արձանագրում է, որ «հին աշխարհից», Երկրից եկած փորձառու, «հին սերմնացանները» Նոր աշխարհում կորցրել են իրենց երազները, կարողը խեղդում է, խեղճ են, միայնակ: Մինչդեռ ջիղերում դեռ հորդում է կենսասիրությունը, բայց ակամա «դավաճանն» անպատասխան հողն է, մայրական դաշտին փոխարինած Ջեֆերսոնի հայկական «կայսրությունը»: Քրտինքը դեռ թափվում է հին սերմնացանի ճակատից, բայց տիրականը մնում է կարոտի հեգնախառն արցունքը:

Գրականագետ Հրանտ Թամրազյանը դիպուկ գնահատական է տալիս անցման այս շրջանի փիլիսոփայությանը. «Եթէ հայոց տան ճանապարհի պատմության մեջ, ասենք, Հակոբ Ասատուրյանը մրցակից չունի..., ապա ինքը (իմա՝ Հ. Կարապետնի - Ն.Ս.) շարունակում է այդ թեման, ողբերգությանը հաջորդելու է գալիս դրաման»¹¹: Օտարատունկ սերմնացանները, որպէս կանոն, չեն զգում իրենց ապրած ողբերգությունը, նրանց ապրածը ճիշտ և ճիշտ դրամա է:

Խորն է ընդհանրացման ուժը. «Եւ վերջապէս,- ընդգծում է գրողը,- գրականից առաւել այս գիրքը սիրոյ երախտիք է, արեան ծայն ու հոգու տուրք: Այս մի համեստ ձօն է նրանց, ովքեր մերժեցին մահն ու պարտութիւնը, և նրանց, ովքեր վերադարձի երազը սրտում՝ գրկեցին օտար հողը: Այդ բի՛րտ, բարի՛ սերմնացանները»¹², որոնց հայկականությունը տապալվել է արյան ջիղին խորթ Ջեֆերսոնի փողոցներում, ուր թվում է, թէ նորոգել էին իրենց հավաքական հիշողության «կայսրությունները»: Արձակագիրը խոսում է նրա հայ բնակիչների հոգեբանության, կերպարի ու պատկերի ներքին միասնության լեզվով:

Ո՛րն է Իշխան Փիլիպոսի վերջին բաղձանքը Ջեֆերսոնում. զենք ու զրահ կապել, սպիտակ ձի հեծնել ու աչքերը գոց արշավել Կիլիկիայի երկայնքով՝ կայծակնաթափ հասնելով Կոռիկոս, Պապիոն, Լուլու և Լամբրոն՝ ամենուրեք վառելով ազատության ջահը: Հերոսն իրականությունից առավել երազի տիրակալության գերին է («Իշխան Փիլիպոսի վերջին բաղձանքը»):

¹⁰ «Յառաջ» / օրաթերթ, Փարիզ, 1979, 4 Մարտ:

¹¹ Թամրազյան Հ., Գրական դիմանկարներ, հոդվածներ, Եր., 1998, էջ 183:

¹² Կարապետնի Յ., Նոր աշխարհի հին սերմնացանները, էջ 6:

«Աբգար ամու օտար հարսը», «Հովնանի չորս որդիները», «Արևոտ առավոտների կարոտը», «Գոնսուլ Առաքելը», «Սոսկալի Սահակը» և այլ պատմվածքներում տիրապետում է բնաշխարհի ուղիղ կապը՝ բնութագրիչ անուններ, որոնք «հին աշխարհի» ձգող վկայություններն են հայաշունչ ջեֆերսոններում:

Պատահակա՞ն է արդյոք «Հովնանի չորս որդիները» պատմվածքի գլխավոր հերոսի վերաբերմունքը նոր միջավայրին, որը երկրորդական, ածանցյալ է իր համար. «Ջեֆրոսո՞ն: Մտքում շարունակ կրկնում էր՝ Ջեֆրոսո՞ն: Ի՞նձ ինչ: Թող լինի հազար Ջեֆրոսոն, թող լինի հազար ապարանք, սակայն ո՞վ կարող է բերել իրեն Ջեյթունի արեախանձ հողի բուրմունքը եւ Մարաշի երկնքի կապոյտը»¹³:

Ահա խնդրեմ օտարի դեմ անդուլ մաքառող, ութսունհինգի դռները ծեծող Աբգար ամու անակնկալ արարքը («Աբգար ամու օտար հարսը»): Իր համառության շնորհիվ նա ստեղծել էր Գարակյոզյան շինարարական կայսրությունը, որը միայն արդյունաբերական հզոր սյուն չէր, այլ նաև համառ բնավորության միջնաբերդ: Զավակների ու թոռների համար կառուցած հինգհարկանի հսկայական տունն էլ Ֆրանկլին փողոցի վրա ասես միջնաբերդ էր: Ո՞վ կարող էր վիճարկել նրա իրավունքը. չէ՞ որ Արաբկիրը նրա համար մի առանձին աշխարհ էր, առանձին երկիր ու ժողովուրդ, որի գերդաստանին «...պատկանելու համար մի նախապայման էր պետք: Լինել արաբկիրցի»¹⁴: Ո՞վ կարող էր հանդգնել էրզրումցու, խարբերոցու կամ այլոց ամուսնության թեկնածություններով անհանգստացնել անհողողող արաբկիրցուն՝ «Չըլլա՛ր», ու վե՛րջ: Գեների մաքրության խնդիր է, որը հեզանքի լույսով բացում է հեղինակը: Բայց, ի վերջո, նա հաշտվում է օտար հարսի մուտքին, որը, սակայն, հրաշալի գծերով է առանձնանում՝ մեղմելով ծերունու տառապանքը: Սա է նոր կյանքը, և անզիջում արաբկիրցին ակամա նահանջում է:

Իսկ ահա «Ո՞ր մնացին սասունցիները» պատմվածքում Անդրանիկի երբեմնի զինվոր, Սասունի ապստամբության մասնակից, նախկին հողագործ Սարգիսը վերաշրջում է դոնապանի իր անշուք օրերը, իր Մշո դաշտն է վերակերտում գրքերի, քարտեզների, երևակայության շնորհիվ վերստեղծելով Հայաստանի հեռապատկերը՝ զույգ Արարատներով, Զվարթնոցով, Սուրբ Էջմիածնով, Արաքսով, Անիի մայր տաճարով, Օշականով, Մաշտոցի կիսանդրիով, Աղթամարով, Երերույքով ու, անտարակո՛յս, Երևանով, նրա շենշող լույսերով:

1981 թվականին Հ. Կարապետյանը Նյու Յորքում հրատարակում է «Միջնարար» պատմվածքների ժողովածուն: Մեքսիկա անցած պոլսահայ թատերագիր և բանաստեղծ Մկրտիչ Հաճյանը Կալիֆորնիայում լույս տեսնող «Ասպարեզ»ում

¹³ **Նույն տեղում**, էջ 141:

¹⁴ **Նույն տեղում**, էջ 53:

տպագրել էր Հ. Կարապենցի նոր գրքի առիթով գրախոսություն: «Միջնարար»ը,- գրում է նա,- իրարու սերտօրէն ընդելուզուած եւ իրարմով շնչատրուած «քերթուած»ներու շարք մըն է: Օտար գրողներէն ով որ յաջողած է «Միջնարար»ի «դրամաթիզմով» երգել Մարդուն լինելութեան թէ՛ երջանիկ եւ թէ՛ ողբերգական ներկայությունը երկրագունդի վրա, բարձրացած է համաշխարհային ճանաչումի»¹⁵: Ակնարկը հասկանալի է և արդարացված:

Այս գրքում գործում է ազգային հավաքական կենսագրության պատմական հաջորդականության հոգեդրամատիկ սկզբունքը, ուր հերոսների ապրած «ուշացած դրամատիզմը» ծնունդ է ժողովրդի ողբերգական, բայց իմացական զգացողության. «Մարդու վախճանականության մասին մտորումները,- նկատում է Ա. Քեչիշյանը,- դրանցից բխող տագնապն ու մելամաղձը շարունակ առկա են Կարապենցի գրականության մեջ: Սակայն մահը, որպես փիլիսոփայական ըմբռնումների ամբողջականություն, առանցքային բնույթ է ստանում «Միջնարար» պատմվածքների ժողովածուում»¹⁶:

«Եվ ևս խաղաղության զՏեր աղաչեսցուք» պատմվածքի հերոս Արան, հեղինակի կենսագրության փորձառությամբ լցված, փորձում է Արևելքի և ամերիկյան քաղաքակրթությունների տարբերությունները պարզել իր համար, բայց նոր հորձանքներում չի գտնում իրեն, ինչպես ժամանակին չի կարողացել հաղթահարել հայրերի ու որդիների անհաշտությունը: Դյուրին է գրող դառնալը, բայց Աստծու հետ իր երկխոսությունը, միևնույն է, չի ստացվելու: Չկա հաշտության եզր ո՛չ Աստծու, ո՛չ հոր, ո՛չ հեղինակի, ո՛չ էլ ինքն իր հետ, իր մանկության ու ներկայի միջև: Չկա՝ ներքին խաղաղությունը ոչ մի տեղ, ինչքան էլ խնդրես այն Աստծուց: Հայ բանաստեղծն իր տեղը չի կարողանում գտնել:

Հեղինակը շարունակում է փնտրել մարդու մենության ու լքվածության սկիզբները, մահվան ու ծովի փիլիսոփայական ընկալման ներքին հանգույցները, այսպես կոչված՝ «մենության դիալեկտիկան»: Այս առումով «Աթալայա» պատմվածքը յուրովի կրկնում է «Դոյակ»ի և «Եվ ևս խաղաղության զՏեր աղաչեսցուք»ի կշռույթն ու նյութի մեկնության եղանակը: Այստեղ հերոսը Վահե Սարյանն է, ում միապաղաղ և ունայն կյանքը խորապես ծանձրացրել է:

Նկատելի է նաև, որ Հ. Կարապենցի հերոսները միստիկ գերբնական ուժով են կապված ծովի և օվկիանոսի հետ: Ալեկոծ ներաշխարհի և փոթորկված ծով զուգահեռների հանդիպում ենք արձակագրի շատ պատմվածքներում («Վերջերս ո՞վ է գնացել Հալիֆաքա», «Արևոտ առավոտների կարոտը», «Դոյակը», «Աթալայա», «Աքսոր»): «Աթալայա» պատմվածքում ևս ծովը խորհրդավոր կանչում է

¹⁵ «Ասպարէզ», Լոս Անճելոս, 1982, 4 Յունուար:

¹⁶ Քեչիշյան Ա., Հակոբ Կարապենց / Աշխարհընկալումը և արվեստը, Եր., «Գիտություն» հրատ., 1999, էջ 107:

հերոսին: Նա իր փրկությունն ու հոգեկան ազատագրությունը փնտրում է լեռնացած ծովի փրփրադեզ ալիքների մեջ. «Այսօր իմ ամենից երջանիկ օրն է: Այսօր գտել եմ իմ որոնածը»¹⁷, - հայտարարում է Վահեն: Ծովափին նա հանդիպում է խորհրդավոր Մենավորին, նրա հետ գնում վերջինիս դղյակը՝ այս անգամ՝ Աթալայա: Պատահական չէ, որ օտարացած ձայներով ծանրաբեռ հայ հերոսը գուշակում է ամենակույ աղետ-փոթորիկը, որն սպառնում է Երկիր մոլորակին: Թեև հերոսն ինչ-որ բան գտնում է, բայց մնում է քաղաքակրթությունների լուսանցքում:

«Միջնարար» պատմվածքը, որ տեղ է գտել համանուն ժողովածուում, գրվել է գրքի հրատարակումից տասնամյակ առաջ, նույն սիմվոլիկայի և միստիկայի շաղախով: Հերոսը Հովհան Սեբաստիանն էր, ում երկրային գնացքը տարօրինակ ու անքնին խորհուրդ ուներ՝ ոտաբոբիկ էր, ձեռքին՝ արևածաղիկ. ի սկզբանե փնտրում էր որդուն, բայց հանդիպում է կորուստների մեջ խրված տառապայաների, որոնց պակասում էր գույքը: Գրողը հերոսի համար պահպանում է քրիստոնեական «ընթերցումը»: Հայը Սուրբ Սեբաստիանի նման դառնում է համամարդկային տառապանքի երաշխավորը: Զուգահեռի երկրորդ կշիռն Աստծու որդու իմաստափոխումն է հայկական գունավորումով. «Նա ուզում էր խօսել ամբոխին եւ բաներ ասել, սակայն այն, ինչ պիտի ասէր, որդին ասել էր իր խաչելութեամբ: Նա ուզում էր աշխարհով մի աղաղակել իր սէրը մարդու հանդէպ, սակայն այն, ինչ պիտի աղաղակէր, որդին ապացուցել էր իր մահով»¹⁸:

Անցյալ դարի 70-ական թթ. վերջին գրված «Հում նյութ» դասական կառույցով գրվելիք մի սովորական պատմության համար» պատմվածքում արձակագիրը փորձում է բացատրել գրական նյութի մեջ իր «ներքին փախուստի» ուրվագիծը: «Որքան յիշում եմ,- գրում է նա,- ես միշտ փախուստի մէջ եմ եղել: Փախուստ տնից, փախուստ դպրոցից, փախուստ քաղաքից, փախուստ երկրից, փախուստ մարդկանցից, փախուստ ամեն ինչից: Հիմա սկսել եմ փախչել նաև ինձանից»¹⁹:

Գրականագետ Դ. Գասպարյանն այն համարում է «ինքնանկար»²⁰, այսինքն՝ արվեստագետի ներքին ես-ի ճշգրտման ճանապարհ: Անուղղակի հետևությունն այն է, որ Հ. Կարապետյանը միշտ հետամուտ է արվեստագետի ստեղծագործական տարերքի ծավալումներին, որը «Միջնարար»-ում դառնում է նյութի մատուցման հիմնական առաղծ:

Գլուխ երկրորդ

¹⁷ Կարապետյան Յ., Միջնարար, էջ 51:

¹⁸ Նույն տեղում, էջ 113:

¹⁹ Նույն տեղում, էջ 163:

²⁰ Գասպարյան Դ., Հայ գրականություն, գիրք երկրորդ, էջ 272:

«Կարթագենի դուստրը» վեպը. «օտարի» և համամարդկային քննության կերպերը

Ատենախոսության երկրորդ գլխում քննության է առնվել ամերիկահայ արձակագրի լայն կտավի առաջին նշանակալից գործը՝ «Կարթագենի դուստրը» վեպը (1972): Այն գրական աշխարհում բուռն հետաքրքրություն առաջ բերեց պատմվածքի մեջ ստեղծագործական փորձառություն ձեռք բերելուց հետո, նախ, վիպական ժանրի ընտրությամբ: Ողջունելի էր նաև օտար միջավայրի ու հոգեբանության մեջ իբրև «յուրային», այսինքն՝ իբրև զտարյուն ամերիկացի թափանցելու համարձակությունը, աշխարհն ու նոր հարաբերությունները «իբրև ամերիկացի» մատուցելու խիզախությունը:

Այդ տարիներին գեղարվեստական կառուցողական նման «չեզոք» եղանակ ընտրեց նաև ամերիկահայ մեկ այլ արձակագիր՝ Անդրանիկ Անդրեասյանը, շարադրելով «Երկար գիշերին մեջեն» վեպը (1974), որի նյութն ամերիկյան մաքարտիզմի քննադատությունն էր:

Ի դեպ, Ա. Քեշիշյանը սրում է Հ. Կարապենցի վեպի հակապատերազմական ուղղությունը՝ հաստատելով, որ նրա հետաքրքրությունները մաս են կազմում ամերիկյան գրականության մեջ ծայր առած շարժման լավագույն արտահայտություններին: Նա նկատում է այն Ամերիկայում Վիետնամի պատերազմի մասին լրջագույն վեպերի շարքում, որոնք վճռորոշ դեր ունեցան պատերազմի նկատմամբ ընդդիմադիր մտայնության ձևավորման վրա:

Անշուշտ, այս վեպում այդ տրամադրությունը բերում էր հաշմված Ռալֆը: Ճշմարտությունն այն է, որ Հ. Կարապենցը խորքով ու համամարդկային ազնիվ անհանգստությամբ է անդրադառնում Վիետնամի անփառունակ պատերազմի ողբերգական դեպքերին, հոգեբանական այն բարդույթներին, որ ապրել են պատերազմի մղձավանջի միջով անցածներն ամերիկյան պատուհաններից այն կողմ:

Վեպի հերոսները՝ Հոմերը, Ալմիրան, Ռալֆը և Սևակը, մեր համոզմամբ, կրում են հեղինակի փոթորկոտ ներաշխարհի ու առավելապես իմացական ողբերգության փոխկանչը, հակադրությունների ու համադրությունների հորձանուտում փոխլրացնում են միմյանց, բացում գրողի տեսողական պատուհանը՝ որպես գոյապաշտական ուղղության համարձակ քննություն:

Տեղում էլ նշենք, որ վեպում թույլ է Սևակ Սուրյանի հոգեբանական զարգացման կաշկանդված մատուցումը, որից հեղինակը, թվում է, անընդիստ խուսափել է այն մտավախությամբ, թե այս կերպարին իր բուռն ուշադրությունը կարող է խանգարել Հոմերի ու Ալմիրայի գերակա զգացումների ընկալմանը: Մեզ պատահական չի թվում նաև Սևակի՝ ինքնաշարժի արկածին զոհ գնալու դրվագի վիպական տարբերակի ընտրությունը, որպեսզի ընթերցողի մեջ Հոմերի ու Ալմիրայի

բաժանումը սիրայինից զատ այլ տարակույսների տեղիք չտա, որպեսզի, ինչու էլ, վեպում հայկական գնահատության գործոնները գերիշխող չդառնան:

Վեպը բարձր է գնահատել Դ. Գասպարյանը. «Կյանքով լի այսպիսի վեպի նախորդը հայ գրականության մեջ չկա,- հայտարարել է նա՝ մասնավորելով, որ «...վեպը սիրո մասին է: Կյանքը տոն դարձնող, առկա, հարաճուն ու հավերժական սիրո մասին: Այս վեպը կյանքի մասին է: Լուսավոր ու պայծառ կյանքի մասին: Սա հայերեն գրված ամենալուսավոր, իրական կյանքով լեցուն, կյանքն ապրելու՝ երջանկությամբ վարակող և սեր պարգևող վեպ է»²¹:

Իսկ ահա բանաստեղծ և քննադատ Թորոս Թորանյանի՝ արձակագրի ծննդյան 80-ամյակին նվիրված՝ «Հայ գրականության խշշացող բարդին՝ Հակոբ Կարապենց» ուսումնասիրության մեջ վեպն առանց չափազանցության դիտվում է Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» գրքի զուգահեռներում. «Կարապենցին ամբողջ վեպը մարդ արարածին ներաշխարհի քննութեան յատկացում է: Ներաշխարհ, որ կուղպ, անվերջանալի քարայր մը ըլլայ կարծեք, կղպում ինքնազգայն ու մէկ բանալիներով»²²: Դատողության մեջ մենք նկատում ենք ծայրահեղություն: Քննադատին թվում է, թե այս վեպը հա՛յ մարդու մտածումների կիզակետն է:

Եվ հարցը միայն վեպի իրականության էկզիստենցիալ ճանաչողության մեջ չէ: Չի կարելի անտեսել գրողի աշխարհաքաղաքագիտության՝ կոսմոպոլիտիզմի նախընտրությունը, հայեցակետ, որի հանդեպ համակրական, չասելու համար ջերմեռանդ վերաբերմունքի ծավալումը վեպի հիմնարար կողմնորոշչներից է, եթե կուզեք, անգամ հաճախ ազգայինի նախապատվության գործոնների հաշվին: Իսկ դրանց մեջ անպայման պիտի ներառել մարդու ներաշխարհի մանրագնին քննության նրբին շերտերը՝ փիլիսոփայական ու գեղագիտական մտքի նպատակային, հետևողական շարադրումի փորձը, սիրո ու սեռի ազատության ու դրանց դիմաց ընտանեկան շարունակական հավատարմության, կյանքի ու մահվան, բնաբույս բերկրանքի ու տառապանքի տևական խորը գիտակցումը:

Գլուխ երրորդ

«Ադամի գիրքը». ազգայինի նախահիմքը՝ իբրև գեղարվեստական մտածողության ճանապարհ

Ատենախոսության **երրորդ գլուխը** («Ադամի գիրքը». ազգայինի նախահիմքը՝ իբրև գեղարվեստական մտածողության ճանապարհ») նվիրված է Հ. Կարապենցի «Ադամի գիրքը» վեպի ուսումնասիրությանը, որում պատմական փաստերի համադրմամբ ձևավորված է դիրքորոշում 20-րդ դարասկզբի մեծ ողբերգության

²¹ **Նույն տեղում**, էջ 279:

²² **Թորանյան Թ.**, Հայ գրականութեան խշշացող բարտին՝ Յակոբ Կարապենց, Հայէպ, 2006, էջ 34:

նկատմամբ: Վեպում գրողն անդրադառնում է հայերի վրիժառության, ազգային արմատներին վերադառնալու, Ղարաբաղը մեկընդմիջտ ազատ ու անկախ տեսնելու խնդիրներին:

Ուշադրության կենտրոնում են գրողի գեղագիտական համակարգի անկյունաքարը հանդիսացող ոգու և լեզվի, ազգային հիշողության և պատկանելության կենսական հարցեր: Պետք է նկատել, որ հիմնականում ճիշտ ուրվագծերով տրված վիպական մեկնակետերը՝ ոգի և լեզու, հող և հայրենիք, այնուհանդերձ, սյուժեի համար «մասնավոր», առանձնացած հիմք չեն դառնում, մեր տպավորությամբ մնում են իբրև ազգային թեմայի հայտնի մանրամասներ, որոնք սփյուռքահայ գրական աշխարհից եկող քաջածանոթ դրվագներ են:

Խորքի մեջ նյութը բացելու եղանակը կրկնում է «Կարթագենի դուստրը» վեպի հարցադրումները: «Ադամի գիրքը», - գտնում է վեպի հեղինակը 1986-ին «Գրողը իր հետ, այլոց հետ» փորձագրության մեջ, - մտնում է ամերիկեան ժամանակակից գրականության «ինքնամփոփ» հոսանքի մեջ, որը մենակ մարդկանց ու մենակ համայնքների մի տխուր ու անդիմագիծ շրջապտոյտ է»²³: Դ. Գասպարյանն այս վեպը փորձում է դիտել «միանգամայն ամերիկյան ու սփյուռքահայ գրականության» արտադրանք, այսինքն՝ «պատկանելության» ցուցիչ, ինչպես հենց ինքն է գրում, «ենթահող ունենալով ամերիկյան ժամանակակից հասարակարգն ու այնտեղ ապրող հայ համայնքը»²⁴:

Սրանից էլ հարկ է բխեցնել, որ «Ադամի գիրքը» երկի վիպական գործողությունների զարգացումների ուրվագծի մեջ հայկականը վերակազմվում է իբրև մշտակա ու գերակշիռ գործոն: Խորանում է ծրագրային այն ելակետը, թե Ադամ Նուրյանի աշխարհատեսության մեջ հայությունը լինելության «միակ փրկությունն» է՝ աշխարհի «փրկությանը» զուգահեռ: Ահա թե ինչու գլխավոր հերոսը մաքառում է մի կողմից հայկական ներաշխարհի պաշտպանության համար՝ բնօրրանից հազարավոր վերստեր հեռու, մյուս կողմից ինքնաբուխ ձգտումով փորձում է ներգրավվել համաամերիկյան հետաքրքրությունների հորձանքի մեջ: Նա «մատնում է» հայկական ակունքից եկող իր խառնվածքը, վերհանում ազգային երկվության բերած բարդությունները, սակայն հասցնում է նաև սավառնել վերազգային գիտակցության «նեղ թվացող» արահետներից:

«Ուժացումի հոլովոյթի մէջ,- հուշում է ընթերցողին Հ. Կարապենցը,- նա ասելի շեշտակի մարդ է, քան իր համատիպարներն ամերիկեան գրականութեան մէջ: Նուրեանը գոնէ նախասիրութիւններ ու ատելութիւններ ունի, միաժամանակ հայ եւ ամերիկացի լինելու երկութիւն ունի, օտարութեան ու հայրենիքի զգացողութիւն ունի: Պատմական հայեցակէտ ունի: Կիրք ունի, նոյնիսկ ուշացած երազներ: Այս

²³ **Կարապենց Յ.**, Երկու աշխարհ, էջ 80:- Ընդգծումը հեղինակինն է – Ն. Ս.:

²⁴ **Գասպարյան Դ.**, Հայ գրականություն / գիրք երկրորդ, էջ 245:

տեսակետից, դեռ չհաշուած լեզուն, գիրքը մաս է կազմում սփիւոքահայ գրականութեան՝ անկախ արժեւորման չափանիշներից»²⁵:

Այստեղ կենտրոնանում են հոգեբանական և դրամատիկ լարումով առանձնացող դրվագներ, որոնք բացում են Նուրյանի ներքին դիմադրական գծերը: Կնոջ հետ նրա առճակատումը շարունակվել է քսան երկար տարի. խարխուլվել են ընտանեկան հանգույցները. «ազատամիտ» հայ կինը, լքելով ամուսնուն, երկու զավակներին, նախընտրել է սեռային անհասկանալի միութիւնն օտարազգի և հաշմված Պատրիկ Մուրիեղի հետ:

Սա վեպի բարոյական շերտերի անհաղթահարելիության աստղծն է, որտեղ պարտվող գլխավոր հերոս մտավորականը, այնուհանդերձ, թվում է, վերագտնում է տոկուն ներուժ:

Վեպում Հ. Կարապենցն անդրադառնում է սփիւոքահայի երկփեղկված ինքնության հարցին: Գնահատության արժանի է քննադատ-արձակագիր Վահե Օշականի սուր հայացքը: Անդրադառնալով Ադամ Նուրյանի կերպարին, նա որոշ ծայրահեղությամբ փորձում է բացատրել, թե ով է այս հերոսը. «...Կարապենցի Ադամն ինքն իր ցուլքին շուրջը դարձող նարգիսական ներշնչեալ մտաւորական-արուեստագէտի հովեր պտտցնող հայ մըն է՝ անկարող որեւէ նշանակալից արարքի, որեւէ յուզումի կամ ինքնատիպ մտածումի: Ոչինչ կը պատահի Ադամի կեանքին մէջ՝ ցնորքէ ցնորք, գիրկէ գիրկ, բազմոցէ բազմոց ու պարագաներէն թշուաւած-տարուած մէկը, ազնուական վրիպած մը»²⁶:

Մենք համակարծիք ենք Ա. Քեշիշյանի սևեռուն նկատաւմանը, թե Վ. Օշականի դիտարկումն ունի որոշ «հապճեպության» կամ, ինչպես ինքն է նկատում, «մակերեսայնության» կնիք: Ընդ որում՝ նա առաջարկում է դիմել արևմտահայ փորձառու գրագետի գնահատականի մեջ խմբագրական շտկումի «բաց» քայլի, որպես թե «նարգիսականությունը» պետք է փոխարինել «եսակենտրոնությամբ»՝ այն դիտելով մարդու՝ օրեցօր խորացող մենության հետևանք:

Ապա նա անցնում է Վահեի հոր՝ Հ. Քյուֆեճյանի «Մեհյան»ի ժամանակների երբեմնի «հարթենք»ների ոճին՝ կտրուկ հակադրվելով արդեն որդու մեկնություններին: Ա. Քեշիշյանի միտք բանին հետևյալն է. «Ինչ վերաբերում է Նուրյանի՝ «...որեւէ յուզում կամ ինքնատիպ մտածում» ջունենալուն, պետք է ասել, որ այդ բնորոշումը կատարված է խախտու հիմքերի վրա»²⁷:

Բայց նկատենք, որ Վ. Օշականը «չի դժգոհում» Հ. Կարապենցի հերոսի գաղափարական խորքից, աշխարհի հանդէպ կրակոտ վերաբերմունքից. նա արձանագրում է, որ Նուրյանը խառնվածքով ներփակ է՝ առավել վերլուծող, քան

²⁵ Կարապենց Յ., Երկու աշխարհ, էջ 80:

²⁶ «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1983, 8 հոկտ:

²⁷ Քեշիշյան Ա., Հակոբ Կարապենց / աշխարհընկալումը և արվեստը, էջ 130-131:

գործող, «մտածումները»՝ ներթաքույց, մերթ ոչ անտարբեր հայկական հարցադրումների առջև և մերթ էլ՝ ականա փախչող: Այդ մասին խոստովանում է ինքը հեղինակը վեպը գրելուց երեք տարի անց. «Նա այն չէ, ինչ կը ցանկանայինք որ լինէր, այլ այն է, ինչ է՛, իր բոլոր գունատ երազներով, անցողիկ գրգիռներով, որեւէ մէկին եւ որեւէ տեղի չպատկանելու մշտառկայ գիտակցութեամբ: Որոշ առումով, Նուրեանը հակահերոս է, մէկը մեզանից, մեր բոլորի համադրութիւնը: Առնուազն այդ է եղել իմ նախագիծը: Այդ է եղել գրքի գոյութեան իրատւնը»²⁸:

Իսկ Հ. Կարապենցը վեպի հիմնարժեքների մեջ առանձնացնում էր երեք, իր իսկ մեկնությամբ՝ «մակարդակներ», որոնցից առաջինը բացահայտում է «ամերիկեան հասարակարգի դրոյթը», երկրորդը՝ «սփիւռքահայի արդի տագնապը» և վերջապես երրորդը՝ «ներկայ դարի ծայրին գտնուող մարդու տագնապը»²⁹:

Ատենախոսության գիտական արդյունքները ամփոփել ենք հետևյալ **եզրակացություններում**.

1. Հակոբ Կարապենցին պետք է արժևորել, նախ, հայկական էկզիստենցիալիստական մտածողության ու գրական փորձարարության շրջանակում, իր ժամանակակիցների՝ Ռ. Հատտեճյանի, Ա. Այվազյանի, Ա. Վարդանյանի և այլոց կողքին: Ավանդույթի բերած կաշկանդումների դիմաց «փրկության ճանապարհին» գոյապաշտները նախընտրում են «բացարձակ ազատության» նոր կարգախոսը:

2. Երկրորդ հատկանիշը գրողի հետաքրքրությունների դաշտում ծննդաբանական գործոնով առաջինի հետ սերտորեն առնչվող արդիապաշտ ուղղության ակունքն է, որը ողողում էր արևմտյան քաղաքակրթության ավերը: Նա ցավով արձանագրում է, որ ազգային գրական սահմաններում արդիապաշտությունն այդպես էլ ամուր չի նստել, մնացել է «լուսանցքում»:

Ըստ Հ. Կարապենցի՝ արվեստը «խաբկանք» է, իսկ ճշմարտության կարելի է հասնել արվեստի համար բնական ճանապարհով, որը մոտեցնում է մեզ այնքան անհրաժեշտ խաբկանքին: Միաժամանակ սփյուռքահայ գրականությունը նրան ներկայանում է իբրև յուրատեսակ «աքսորի» գեղարվեստական քննության եղանակ, մինչդեռ «աքսորի» տակ նա վերակառուցում է իր ըմբռնումը, որը, ինչպես սովորեցնում էր ավագ գրչեղբայր Վ. Սարոյանը, հասարակության մեջ անհատի մեծության, փախուստի և խաբկանքի բարդույթի վկայությունն էր:

3. Արևմտահայ սերունդը նորագույն ճանապարհի գեղարվեստական անդրադարձումներում շարունակ վերադառնում էր բնաշխարհ՝ որպես հուզական մեկնակետ, պատկերում պանդխտության դեգերումների «անլուսամուտ» փիլիսոփայությունը Նոր աշխարհում (Համաստեղ, Բ. Նուրիկյան, Ա. Հայկազ, Վ.

²⁸ Կարապենց Յ., Երկու աշխարհ / գրական փորձագրութիւններ, էջ 80:

²⁹ Նույն տեղում:

Հայկ, Հ. Ասատուրյան և ուրիշներ), ինչն ընդհանրական բնորոշումով հայտնի է իբրև Կարոտի գրականություն: Իսկ ահա արևելահայ Հ. Կարապենցը փորձեց մի քայլ առաջ անցնել՝ բազմակողմանի արտացոլելով ոչ միայն հայի, այլև առհասարակ մարդու խորթացումը միջավայրից, անգամ՝ իր անցյալից:

4. «Անծանոթ հոգիներ» պատմվածքների առաջին ժողովածուն Հ. Կարապենցը որակում էր որպես անցած տարիներին իր մեջ խմորված գրական փորձառության արդյունք: Նա գտնում էր, որ հասել է պահը՝ դրսևորելու ներաշխարհի քարանձավներում թաքնված անծանոթներին, որոնք օրն ի բուն ինքնություն էին պահանջում:

5. Հ. Կարապենցը ոճական նորարարության, յուրովի ասելաձևի կողմնակից է: Բարձր գնահատելով ազգային ու տոհմիկ գրականությունը՝ նա ընդգծում է, որ հենց ազգայինից է գրողն անցնում համամարդկայինին: Իր նկատած հոգևին այդ աշխարհն ամբողջանում է «Նոր աշխարհի հին սերմնացանները» պատմվածքների գրքում, ուր մայր հողից փրթած, «նոր աշխարհում» չհամակերպված հայ տիպարներն իրենց հերոսական կյանքի մայրամուտին դեռ փորձում են պահել-պահպանել ազգային դյուցազնական ոգին: Ողբերգականի ու թախծի, անհուն կարոտի ու հերոսականության շեշտերով է պարուրում նրանց նոր օրերը հեղինակը՝ կարեկցանքով, բայց հպարտությամբ: Հ. Կարապենցը ստեղծագործական հանդուգն մտահղացումով իր հերոսներին «տեղավորում է» ամերիկյան երևակայածին Ջեֆերսոն քաղաքում, որը հայաշունչ է, ապրեցնում է իր մեջ հայության անցյալի ոգին վերանորոգող ներուժը: Նրանք Արևմտահայաստանից և Կիլիկիայից այստեղ հասած մոհիկաններ են, ըստ էության՝ ուժահատ, բայց ոգին նույնն է, ինչ Սասնա լեռներում, ինչ Մարաշում ու Ջեյթունում: Ու սա է կարևորը:

6. Նոր հանգրվան է բացում արդեն ութսունականների սկզբին միայնակ հերոսների աշխարհի մեկնության պատուհանը «Միջնարար» ժողովածուի մեջ, ուր հեղինակն ընդգրկում է «տառապալների» կյանքի և մահվան շուրջ մտորումների հարաճուն կարգ, ուր հերոսները տարիքային գործոնից անկախ գիտակցորեն նախընտրում են ողբերգական դրաման՝ տառապանքն ու մահը, որպես փիլիսոփայական ըմբռնումների արթուն տրամաբանություն («Եվ ևս խաղաղության զՏեր աղաչեսցուք», «Աթալայա» «Դոյակ», «Աքսոր», «Միջնարար» և ուրիշներ): Այստեղ է «մենության դիալեկտիկայի» փիլիսոփայական մեկնակետը՝ մահը վրա է հասնում կյանքի միջնարարին: Անկատար երազն է մեր ուղեկիցը: Ո՛ր փախչել:

7. Անցյալ դարի 70-80-ական թթ., մեկ տասնամյակի ընթացքում, Հ. Կարապենցն ընթերցողի սեղանին դրեց երկու վեպ՝ «Կարթագենի դուստրը» (1972) և «Ադամի գիրքը» (1983): Երկուսում էլ հեղինակի մտորումներն են ազգային ճակատագրի շուրջ: Առաջինն օտար «լուսանցքների» մեջ դեգերող հայկական միտքն է՝ միշտ «ավանդականից» խուսափուկ, բայց նաև նրա «միջանցքներից» կաշած: Երկրորդում ազգային «վրիժառու հոգեբանության» շարունակական

ընթացքների «արդար» (հայկական պատուհան) կամ «անարդար» (միջազգային ընկալման դիտանկյուն) նախահիմքերի քննության ճիգն է: Երկվություն, որ հակասական ժամանակի, ողբերգության ծնունդն է, երկվություն, որի մի բևեռում հայի մխացող ճակատագիրն է՝ իբրև ապրում ու գոյություն, մյուսում՝ Եղեռնի քաղաքական մոռացումի սարսուռը, աշխարհի անտարբերության գինը:

Հ. Կարապենցը չի վախենում օտար միջավայրից: Ընդ որում՝ «Կարթագենի դուստրը» վեպում նա իր հոգեաշխարհը բացում է որպես օտար մարդ: Ալմիրային սիրում է՝ որպես ամերիկացի, Ջելդային նվաճում է՝ որպես հայ:

8. Ատենախոսության մեջ փիլիսոփայական հարցադրումների կարգը բացված է Հ. Կարապենցի փորձագրությունների լայն խորքի վրա («Երկու աշխարհ»), եռաշերտ կարգավորումով՝ մարդը, հայը և աշխարհաքաղաքացին, ուր աչքի է ընկնում առաջին հերթին գրողի բերած գիտակից ու ենթագիտակից ճանաչողական ներհակությունը, այն, ինչ հեղինակը կոչում է լայն իմաստներով գրականություն, որը զուգահեռի վրա պահում է գրողի հզոր ներաշխարհը: Կարևոր հարցադրումների մեջ առանձնացրել ենք Կարապենց մարդ-Կարապենց արվեստագետ հարաբերության քննության խնդիրը՝ իբրև «Երկու աշխարհ». գրողն իրեն տեսնում է առաջինն արևմտյան, ամերիկյան, համաշխարհային գրականության մեջ, երկրորդը՝ հայ գրականության: Բայց նրա գրական առարկայական աշխարհը, մեր կարծիքով, հայ գեղարվեստական ծիրում է:

Հետազոտության բովանդակությունն արտացոլված է ատենախոսի հրատարակած հետևյալ հոդվածներում՝

1. Մշակույթի և մտավոր աշխարհի բարոյականության նկարագիրը Հակոբ Կարապենցի «Կարթագենի դուստրը» վեպում, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու», «Լիմուշ» հրտ., Երևան, 2014, էջ 350-362:
2. Հակոբ Կարապենցի «Աբգար ամու օտար հարսը» պատմվածքը, «Դպրատուն», «Դիզակ պլյուս» հրտ., Ստեփանակերտ, 3/2015, էջ 80-85:
3. Հակոբ Կարապենցի «Միջնարար» ժողովածուն, «Դպրատուն», «Դիզակ պլյուս» հրտ., Ստեփանակերտ, 1(4) 2016, էջ 68-75:
4. Հակոբ Կարապենցի «Ադամի գիրքը» ազգային նախահիմքը՝ իբրև գեղարվեստական մտածողության ճանապարհ, «Արցախի պետական համալսարանի Գիտական տեղեկագիր. Գրականագիտություն», «ԱրՊՀ » հրտ., Ստեփանակերտ, 1/2017, էջ 221-226:
5. Հայն ու հայկական ամերիկյան միջավայրում. Հակոբ Կարապենցի առաջին՝ «Անձանոթ հոգիներ» ժողովածուի հետքերով, «Հայագիտական հանդես», Երևան, 2017, №3 (37), էջ 100-109:
6. «Կարթագենի դուստրը» վեպը. «օտարի» և համամարդկայինի քննության կերպարը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», «ԱՍՈՂԻԿ» ՍՊԸ տպարան , Երևան, 3-4, 2017, էջ 48-52:

**СИМОНЯН НАНАР ВИЛЕНОВНА
ПРОИЗВЕДЕНИЯ АКОПА КАРАПЕНЦА**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10-01. 02 – “Армянская литература новейшего периода”.

Защита состоится 22-ого июня 2018 г. в 14: 00 часов на заседании специализированного ВАК ООЗ по специальности “Литературоведение” при Институте литературы им М. Абеяна, по адресу: г. Ереван, ул. Г. Лусаворича, 15.

Научные результаты данной диссертации можно обобщить в нижеследующих выводах:

1. Армянскую прозу второй половины двадцатого века не возможно представить без богатого литературного наследия Акопа Карапенца. В жанровых рамках рассказа, романа и эссе он перестраивал остроту познавательного слова и актуальность, по формулировке автора - высший ход событий актуальности.

Его произведения целиком являются попыткой поисков ответов на философские вопросы, как признается сам автор в кратком эссе «Спасение слова» опубликованном в 1986 – ом году: «Пишу потому, что жизнь и не совершенна и не справедлива. Создавая труды я стараюсь найти правильный вопрос; а иногда и правильный ответ. Стараюсь спасти себя, а потом самого человека»³⁰.

2. Акопа Карапенца можно и нужно оценить в рамках армянского экзистенциального художественного мышления наряду со своими современниками Ваге Ошаканом, Ропер Готтечяном, Агаси Айвазяном, Арманом Варданяном и др. Вопреки старинным обрядам скованности, на писательском «пути спасения» экзистенциалисты предпочитают новый девиз «обсолютной свободы». На почве всемирного «экзистенциализм» разрушил плотины...больше, чем Йойс - делает вывод Карапенц. Основное - это идеи, которые выражаются то реализмом, то абстракцизмом, но всегда остаются на траектории между сознательным и подсознательным³¹.

3. Вторым фактором на поле писательских интересов, но первым по генетическому происхождению, являются тесно связанные с первым направление модернизма, которая происходит от экзистенциализма. Во

³⁰ Карапенц А. Два мира / литературные эссе, Уотыртаун, 1992, стр. 139 /

³¹ На том же месте, стр. 211

главу армянских экзистенциалистов прозаик Карапенц ставит Акопа Ошакана, как высшее явление литературы, наравне с Джеймсом Джойсом³². А в новейших национальных литературных развитиях в рядах преданных модернистов А. Карапенц видит Ваге Ошакана, Григора Пылтыана и себя.

4. Акоп Карапенц, будучи по происхождению армянином из Персии, но предпочитавший американский очаг, очертил новые познавательные грани слова.

Западноармянское поколение на пути новейших художественных поисков бесконца возвращалось к природе, как к эмоциональному старту, изображая философию эмиграции в новом мире (Амастех, Б. Нурикан, А. Гайказ, Г. Асатурян и др.), которая в общем известна, как литература ностальгии. А вот западноармянский писатель Карапенц попытался сделать шаг вперед, всесторонне изображая отчуждение не только армянина, а личности от общества, и даже отчуждение личности от своего прошлого.

Национально - гражданский образ самого писателя и созданная им литература продолжают оставаться актуальным по сей день. Он подчеркивает, что нельзя довольствоваться комплексом, ставшим традиционной национальной озабоченностью (смешанные браки, нотации возвращения на родину, долгие описания американских нравов, сугубо-личные боли и переживания, описания автобиографических эпизодов).

5. Акопа Карапенца надо оценивать в рамках армянского художественного экзистенциального мышления наряду со своими современниками Р. Гаттецяном, А. Айвазяном, А. Варданяном и др. Вопреки старинным обрядам скованности на писательском «пути спасения» экзистенциалисты предпочитают новый девиз «обсолютной свободы».

³² На том же месте, стр. 206

Движение модернизма со множеством противоречивых, откровенных, иногда поверхностных и даже противоречивых течений, - пишет он, - целых почти два века омывая Западные миры, наконец доплыл до наших берегов. Но не дошел до суши, остался на полях. Акоп Ошакан, бросивший свой умственный и познавательный якорь в море классицизма, стал основателем и пионером модернизма в новейшей армянской литературе и по форме и по содержанию. (На том же месте, стр. 204).

6. Вторым признаком на поле писательских интересов являются тесно связанные с первым источники экзистенциального направления, которые омывают берега западной цивилизации. Он с болью отмечает, что в рамки национальной литературы экзистенциализм не проник глубоко, а остался «на полях». По Акопу Карапенцу искусство – это обман, а истины можно достичь естественным путем, которая так сближает нас к столь нужному нам обману. Одновременно зарубежная армянская литература представляется, как своеобразная «ссылка». А под «ссылкой» он перестраивает свое восприятие, которое как считал старший брат по перу В. Сароян, является свидетелем одиночества, обмана, отчуждения личности в обществе.

7. Западноармянское поколение на пути новейших художественных поисков бесконца возвращалось к природе, как к эмоциональному старту, изображая философию эмиграции в новом мире (Амастех, Б. Нурикан, А. Гайказ, Г. Асатурян и др.), которая в общем известна, как литература ностальгии. А вот западноармянский писатель Карапенц попытался сделать шаг вперед, всесторонне изображая отчуждение не только армянина, а личности от общества, и даже отчуждение личности от своего прошлого.

8. Первый сборник своих рассказов «Незнакомые духи» А. Карапенц оценивает как результат созревших в нем литературных поисков. Он считал, что настал момент выявить наружу всех незнакомых персонажей, которые скрывались в его душе в ожидании самостоятельности.

9. А. Карапенц был сторонником стилистического новшества. Высоко оценивая национальную и знатную литературу, он подчеркивал, что именно от национального писателя делается переход к общечеловеческому. В сборнике рассказов «Старые сеятели нового мира» обобщается духовный мир, где героические персонажи – армяне, не смирившись с «новым миром», на закате своей жизни продолжают сохранить национальный и героический дух. Трагизмом и скорбью, ностальгией и героизмом обертывает автор «новые дни» своих персонажей, но с гордостью и сочувствием. Акоп Карапенц с художественным замыслом своих персонажей «помещает» в вымышленном американском городе Джефферсон, где царит армянский дух, внутренняя сила обновляющая дух прошлого армян. Это могикиане, переехавшие из Западной Армении и Киликии, по сути обессиленные, но в том же духе, что и в Сасунских горах, в Мараше и Зейтуне. И это самое главное.

10. В сборнике «Мичнара» опубликованном в начале восьмидесятых открывается новый приют в мир одиночества, где автор включает замыслы и размышления о жизни и смерти «измученников», где герои, вне зависимости от возраста, умышленно предпочитают трагическую драму, страдание и смерть, как трезвое восприятие философского мышления. («Аталая», «Замок», «Ссылка», «Мичнара» и др. Здесь «диалектика одиночества» является философским стартом: смерть наступает в середине жизненного пути. Неосуществленная мечта – это наш спутник. Куда деваться?

11. В 70 – 80-ые годы прошлого столетия за одно десятилетие А. Карапенц положил на стол читателя два романа: «Дочь Картагена» (1972) и «Книга Адама» (1983). В обеих книгах авторские размышления вокруг национальной судьбы. В первой книге – армянские думы, которые скитаются в чужих краях избегая «традиционности», но держатся «на полях». Во – второй книге автор прикладывает усилия расследовать первоосновы национальной «психологии мстителя». Удвоение, которое является плодом противоречивости времени, трагедии, удвоение, на одном конце которого находится тлеющая судьба армянина, который живет и творит, а на другом конце – политическое забвение геноцида, безразличие мира.

А. Карапенц не боится чужой среды. В романе «Дочь Картагена» он раскрывает свой внутренний мир как чужак. Любит Алмиру как американец, завоевывает Зельду как армянин.

12. В диссертации философские вопросы раскрываются при помощи эссе А.Карапенца («Два мира») со своим трехслойным урегулированием: человек, армянин и космополит, где выделяется приведенная писателем познавательная контрастность сознательного и подсознательного, то, что автор в широком смысле называет литературой, на параллели с которой держится могучий внутренний мир писателя. Из всех поставленных важных вопросов выделили задачу расследования соотношений Карапенц – как человек и Карапенц – как искусствовед, как расследование соотношений «двух миров». Писатель находит себя в первую очередь в западной, в американской, в мировой литературе, а после – в армянской литературе. Однако его литературный вещественный мир, по нашему мнению, является армянской художественной траекторией.

NANAR VILEN SIMONYAN
WORKS OF HAKOB KARAPENTS

The abstract of the thesis for the scientific degree of the Candidate of Philology in the specialty IO - 01. 02 "The modern era of Armenian literature ".

The defense will be held on the 22 of June, 2018, at 14.00 in a meeting of the specialized Higher Attestation Commission on specialty "Literary criticism" at the Institute of Literature after M. Abeghyan , Yerevan , G. Lusavorich 15.

SUMMARY

The scientific results of the dissertation can be summarized in the following inferences.

1. In the second half of the twentieth century it is impossible to imagine the Armenian prose without the rich literary heritage of Hakob Karapents. In the genre of story, novel and essay he rebuilt the acute of cognitive word and the high courses of modernity. His work in general is an attempt to search for answers to philosophical inquiries, as he admits in the essay of the 1986 "Word Salvation". " I write as life is neither perfect nor fair .While writing I try to find the right question and sometimes the answer. By writing I try to save myself, then a man"³³.

2. Hakob Karapents must be appreciated within the framework of Armenian existentialist artistic thinking among his contemporaries R.Ratchejian, A. Ayvazyan, A. Vardanyan and many others. Against the constraints based on traditions " on the way of salvation" the existentialists prefer the new motto " utter freedom".

"Existentialism devastated the dikes on the earth.... More than hope" concludes H. Karapents." Their subfield are the ideas expressed in both realistic and abstract colours, but still remaining in the midst of consciousness and subconsciousness"³⁴.

3. The second property is the writer's interest, initial factor closely related to the modern direction which derived from existentialism . The head of his Armenian limits was Western Armenian Hakob Oshakan, as a high literary phenomenon, as equal to James W. Joyce³⁵. And in the modern national literary developments, among the "most

³³ Karapents H . " Two Worlds", literary essays, Watertown,1992, p.139.

³⁴ At the same place, p.211.

³⁵ At the same place, p.206.

By the way, our author the extensive way of modernism brings alongside the new Armenian movement, though he admits that assimilation is not complete; national modernism is not a pouring river. " The modernist movement with its numerous contradictory,often sincere, sometimes superficial, even indefinable currents,"after

believer" modernists, H. Karapents mentioned Vahe Oshakan, Grigor Balyan and him. 4.Hakob Karapents was Iranian-Armenian, but preferring American_Armenian hearth in his literature he outlined a new boundary of speech.The generation of the Western Armenian on the way of new literary reflections continuously returns to their homeland as emotional destination, reflects the roams of emigrants in the New World(B. Nurikyan, A Haykaz, V. Hayk and others) known as longing literature.But H. Karapents tried to step forward reflecting both Armenian and a person's estrangement from the enviroment even from their past. The national-civil image of the writer and the literature he created still keep their actuality.

He emphasized that one could not be satisfied with sharp national concerns, traditional complex (cross marriages, an admonishment for returning to birthplace, characterization of temporary American morals, personal pains and autobiographies with happy and sad episodes).

5.Hakob Karapents must be appreciated within the framework of Armenian existentialist artistic thinking among his contemporaries R.Ratchejian, A.Ayvazyan, A. Vardanyan and many others. Against the constraints based on traditions "on the way of salvation" the existentialists prefer the new motto "utter freedom".

6. The second property is the writer's interest, initial factor closely related to the modern direction which is deluged by the western civilization borders.He reports sadly that within national literary borders modernism has not found its place, it has been left. According to H. Karapents art is an illusion and one can learn the truth by the natural way of art which approaches us to that necessary illusion. At the same time the diasporan literature is in some way " an exile", a way of literary examination, whereas under " the exile" he rebuilds his perception as it was taught by W. Saroyan the evidence of individual's solitude, escape and illusion in the society.

7.The generation of the Western Armenian on the way of new literary reflections

flooding the Western world for two centuties finally reached our shores.It has not landed yet, it has remained in the margin. Being stuck in classicism with his mental and cognitive foundations Hakob Oshakan was a contemporary pioneer of modern Armenian literature, both as a form and as content. "(At the same place, p.204).

continuously returns to their homeland as emotional destination, reflects the roams of emigrants in the New World(B. Nurikyan, A Haykaz, V. Hayk and others) known as longing literature. But H. Karapents tried to step forward reflecting both Armenian and a person's estrangement from the environment even from their past. 8. The first collection of his novels "Unknown Souls" H. Karapents qualified as the result of his literary experience. He thought it was time to express the strangers' inner world who required identification day by day.

9. H. Karapents is the supporter of speech's stylistic innovation. Appreciating highly national and noble literature he underlines that the writer reaches worldwide from the national. It is prominent in the novel "The Old Sowers of the New World" that born in homeland Armenians do not conform with the New World trying to protect their national spirit on the way of their sunset. The writer shrouds their new days with tragedy and sorrow, longing and heroism at the same time he does it with pride. H. Karapents with his creative idea settles his heroes in Jefferson which is full of Armenian breath, the potential of Armenian spirit. They are the Mohicans of Western Armenia and Kilikia exhausted, but their spirit is the same as it was in the Sasna Mountains, Zeytun and Marash. And this is the most important.

10. In the 1980s in his "Intermezzo" collection he represented a scene of lonely heroes, where the author included life and death of the suffering and heroes not depending on age consciously preferred suffering and death as philosophic perception.

11. In the 1970s he published two novels "the Daughter of Carthago" and "The Book of Adam". In both novels the author focuses on the national destiny. The first is Armenian mind wandering in a foreign country and the second is the struggle between national and international. Duality which is the birth of contradictory time and tragedy. On one side is Armenian destiny, destiny of living and existence and on the other side is the Genocide which is the result of the world's indifference.

Karapents is not afraid of foreign society. In his novel "the Daughter of Carthago" he opens his inner world as a stranger. He loves Almira as American, Zelda as Armenian.

12. In the dissertation the order of philosophic issues is reflected in Karapent's essays in the following way: the human being, Armenian and a cosmopolite where is prominent the writer's conscious and subconscious cognitive contrariety which the writer calls literature. We have separated a man Karapents and an artist Karapents as two worlds where the writer at first is in Western, American, World literature and the second is in Armenian literature. But in our opinion his literary world is in Armenian orbit.

